Նկարադարան

ՀՀ ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐՈՒ
ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ՊՈԱԿ

Լուսաբանում

Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի կարիերայի ուղղորդման կենտրոնի պատասխանատու Լևոն Իգիթյանի ուղեկցությամբ 2021 թվականի մայիսի 7-ին ուսանողները մասնակցեցին Գյումրու Անի թաղամասում «ԷկոՎիլ» արևային տեխնոլոգիաներ ընկերությանը կազմակերպած ծառատունկին: Միջոցառման նպատակն էր բարեկարգել և ավելացնել քաղաքի կանաչ պուրակները: Արդյունքում հիմնվեց խոսող ծառերի պուրակ, որոնք ունեն Գյումրվա կոլորիտային և հումորային ցուցանակներ: Միջոցառման ընթացքում ուսանողները տնկեցին անվանական ծառեր, ինչպես նաև Գյումրու ՀՊՏՀ ԳՄ մասնաճյուղում մասնակցեցին «Մարքեթինգ և վաճառք» թեմաներով սեմինար-դասընթացին:

Կարիերայի ուղղորդման կենտրոն

Լուսաբանում

Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի ավարտական կուրսերի ուսանողները 2021 թվականի նոյեմբերի 19-ին Կարիերայի ուղղորդման կենտրոնի պատասխանատու Լևոն Իգիթյանի, կուրսղեկներ՝ Աննա Մարգարյանի և Աննա Ղանդիլյանի ուղեկցությամբ մասնակցեցին Գյումրու երիտասարդական պալատում կազմակերպված աշխատանքի տոնավաճառին:

Ուսանողները կատարեցին շրջայց տաղավարներով և ծանոթացան գործատուների կողմից առաջարկվող թափուր հաստիքներին: Թվով 6 ուսանող գրանցվեց գործատուների մոտ հետագայում աշխատանքի ընդունման համար: Տոնավաճառը կազմակերպել էին «Մարդը կարիքի մեջ» հասարակական կազմակերպությունը «Ադամյան և ընկերներ» աշխատանքի տեղավորման կադրային կենտրոնի հետ համատեղ՝ ԵՄ ֆինանսավորմամբ:

Տոնավաճառը նպատակ ունի միավորել Շիրակի մարզի գործատուներին, աշխատանք փնտրողներին, ինչպես նաև մասնագիտական ուսումնական հաստատություններին: Աշխատանքի տոնավաճառին մասնակցել են երկու տասնյակից ավելի գործատուներ և մասնագիտական կրթական հաստատություններ:

Կարիերայի ուղղորդման կենտրոն

Նկարադարան

ՀՀ ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐՈՒ
ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ՊՈԱԿ

ԳՈՌ ԽԱՉԱՏՐՅԱՆ.« ԵՐԵՔ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ, ԵՐԵՔ ՈՍԿԵ ՄԵԴԱԼ»

Լուսաբանում

Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի «Համակարգիչների շահագործում՝ օպերատոր համակարգչի» III կուրսի ուսանող Գոռ Խաչատրյանը նոյեմբերի 28-ին կայացած ՀՀ անկախության 30-ամյակին նվիրված ԵՀՄՊՄԴ-ի գնդակային հրաձգության բաց առաջնություններում /վազող թիրախ, նորմալ վազք 10մ, 30+30 կրակոց տղամարդկանց վարժությունում՝ 6:1/577/ միավորով, վազող թիրախ, խառը վազք 10մ, 20+20 կրակոց տղամարդկանց վարժությունում՝ 387./192+195/ միավորով, վազող թիրախ, 10մ թիմային միքս վարժություն՝ 6:2/375/ միավորով նվաճեց երեք ոսկե մեդալ՝ գրավելով առաջին տեղեր:

Հարկ է նշել, որ հրաձգություն սպորտաձևում բազմակի անգամներ հաղթանակած Գոռ Խաչատրյանը պատվով է կրում Հայաստանի Հանրապետության միջազգային կարգի սպորտի վարպետի կոչումը:

Նկարադարան

ՀՐԱՁԻԳ ԳՈՌ ՀԱԿՈԲԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՁԵՌՔԲԵՐՈՒՄԸ

2021թ.-ի սեպտեմբերի 19-ին և 20-ին անցկացված ՀՀ դպրոցականների «Պատանի հրաձիգ» մրցումների վազող թիրախ մրցաձևերում առաջին տեղեր զբաղեցրեց Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի «Համակարգիչների շահագործում՝ օպերատոր համակարգչի մասնագիտությամբ» երրորդ կուրսի ուսանող Գոռ Հակոբի Խաչատրյանը: Վ.Թ.Խ.Վ-40 մրցաձևում վաստակելով 386 միավոր, իսկ Վ.Թ. Ն.Վ-60 մրցաձևում՝ 567միավոր Գոռը զբաղեցրեց առաջին պատվավոր տեղերը:

Լուսաբանում

«Հավերժ խոնարհում ու փառք Ձեզ՝ քաջ մարտիկներ. Հայոց բանակի հպարտ արծիվներ»

Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի «Խոհարարական գործ՝ խոհարար» մասնագիտության առաջին կուրսի ուսանողները ուսումնարանի զինղեկ Ս. Կարապետյանի, կուսղեկ Հ. Մաղաքյանի և Ա.Մարգարյանի ուղեկցությամբ հունվարի 28-ին՝ Հայոց բանակի 30-ամյակի կապակցությամբ «Ազատամարտիկների պանթեոն»-ում իրենց խոնարհումն ու նվիրումը բերեցին մարտիրոսված մարտիկների շիրիմների առաջ:

Կարոտի, ապրելու, սփոփանքի բառեր էին որոնում նրանք, որոնք խնկարկման հետ բարձրացան երկինք՝ խոստանալով, որ սխրանքի ու նվիրումի հերոսական այս օրինակը կդառնա փյունիկ՝ սերնդակիցների ու ընկերների համար, իսկ տղաների չիրականացած երազանքներն ու նպատակները կիրագործվեն կրտսեր ընկերների կողմից:

Խնկարկման պահին վերջին միտքը միակն էր. «Ձեզ բացակա չե՛նք դնի...»:

Ուսանողները ծաղիկներ խոնարհեցին մեր հերոսների շիրիմներին և տուն դարձան իրենց ուխտը վերահաստատվորած՝ հավերժ փառաբանելով անմահ հերոսներին՝ անուն առ անուն:

Զինղեկ՝ Ս. Կարապետյան

Նկարադարան

ՀՀ ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐՈՒ
ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ՊՈԱԿ

ԿԱՐԵՆ

2016-2020

Ծրագիր

«Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ

Պլան

Այցելություն Գյումրու Ավ. Իսահակյանի տուն-թանգարան

Կուրս- երկրորդ

Առարկա – Հայ գրականություն

Կազմակերպիչ՝ Գ. Ավետիսյան

Այցելությունը կազմակերպվում է հայ գրականություն առարկայի՝ «Ավ. Իսահակյանի քնարերգությունը» թեմայի ուսումնասիրման շրջանակներում։

Այցելության նպատակը.

- ավելի պատկերավոր դարձնել մեծ գրողի պոեզիայի համամարդկային արժեքը,
- ներկայացնել մեծ գրողի ստեղծագործությունները,
- տվորողների մոտ ձևավորել գեղագիտական ճաշակ, սեր հայ պոեզիայի հանդեպ,

Այցելությունից հետո ուսանողների տպավորությունների վերաբերյալ կատարել քննարկում։

Ակնկալվող արդյունք

Վարպետի գրական ժառանգությունը գնահատող ուսանողներ։

Հումանիտար մեթոդմիավորում

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ԳՅՈՒՄՐՈՒ ԱՎ.ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ՏՈՒՆ-ԹԱՆԳԱՐԱՆ

Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի 2-րդ կուրսի ուսանողները հայ գրականության դասախոսներ Գ. Ավետիսյանի և Ք. Գրիգորյանի ուղեկցությամբ սույն թվականի փետրվարի 1-ին այցելեցին Գյումրու Ավ. Իսահակյանի տուն-թանգարան։

Այցելությունը կազմակերպվել էր հայ գրականություն առարկայի՝ «Ավ. Իսահակյանի քնարերգությունը» թեմայի ուսումնասիրման շրջանակներում։

Այցելության նպատակն էր խորությամբ ծանոթանալ Վարպետի կենսագրությանն ու ստեղծագործությանը, արժևորել նրա թողած գեղարվեստական ժառանգությունը ոչ միայն հայ, այլև համաշխարհային գրականության մեջ։

Ուսանողները էքսկուրսավարի ուղեկցությամբ շրջեցին տուն-թանգարանի սենյակներով, լսեցին հետաքրքիր տեղեկություններ նրա մանկության, առաջին սիրո, հասարակական գործունեության և կյանքի վերջին տարիների մասին։ Առանձնապես տպավորիչ էր թոնրատունը՝ կահ-կարասիով, հյուրասենյակը, մառանը, խոհանոցը, որոնք կենդանի վկայությունն էին գրողի ընտանիքի կենցաղավարության և սովորույթների։

Այցելության ընթացքում ուսանողները ընթերցեցին բանաստեղծություններ՝ տարբեր թեմաներով, մեջբերեցին նաև հատվածներ «Արու-Լալա Մահարի» պոեմից։ Կարևորվեց նաև, որ Ավ. Իսահակյանի բանաստեղծությունների մի զգալի քանակ վերածվել են գեղեցիկ երգերի («Դարդս լացեք», «Սիրեցի, յարս տարան», «Տարիներ հետո», «Որսկան ախպեր» և այլն)։

Այցելությունից հետո ուսանողները հարուստ տպավորություններով հեռացան տուն-թանգարանից՝ իրենց հետ տանելով մեծ գրողի արդիական հնչող պատգամները։

Պատասխանատու՝ Գ. Ավետիսյան

Նկարադարան

ՀՀ ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐՈՒ
ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ՊՈԱԿ

Լուսաբանում

ԵՎՍ ՄԵԿ ՈՍԿԵ ՄԵԴԱԼԱԿԻՐ..

Սույն թվականի փետրվարի 6-ին, Հայաստանի Հանրապետության ՁՅՈՒԴՈՅԻ պատանիների առաջնությունում, Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի «Գեղանկարչություն և քանդակագործություն, փորագրող՝ փայտյա գեղարվեստական իրերի» մասնագիտությամբ երկրորդ կուրսի ուսանող Համլետ Պարսամյանը՝ 66 կգ քաշային կարգում գերազանց հանդես գալով զբաղեցրեց պատվավոր առաջին մրցանակային տեղը:
Շնորհավորում ենք մեր ձյուդոիստին և մաղթում ավելի բարձր ձեռքբերումներ:

Լուսաբանում

Գործատուին ներկայանալու հմտություններ

Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի Կարիերայի ուղղորդման կենտրոնը ս/թ փետրվարի 23-ին կազմակերպել էր «Գործատուին ներկայանալու հմտություններ» խորագրով սեմինար-դասընթաց:

Սեմինար-դասընթացի ընդհանուր նպատակն է.
Գործատուին ներկայանալու հմտությունների՝ արդյունավետ աշխատանքային հարցազրույցի մասնակցելու, մրցունակ ինքնակենսագրական գրելու, կարողությունների ձևավորումն է:
Դասընթացի թեմաներն էին.

- **Ինչպե՞ս կազմել մրցունակ աշխատանքային կենսագրական (CV)**
- **Աշխատանքային կենսագրականների տեսակները**
- **Աշխատանքային հարցազրույց**

Դասընթացը վարեց Կարիերայի ուղղորդման կենտրոնի պատասխանատու Լևոն Իգիթյանը, ով բացի հիմնական թեմայից ուսանողների հետ կիսվեց իր սեփական փորձով:

Կարիերայի ուղղորդման կենտրոն

Ծրագիր

<Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան> ՊՈԱԿ

Առողջ ապրելակերպ դասընթացի շրջանակում «Կյանքն առանց վնասակար սովորությունների» թեմայով սեմինար պարապմունք

Մասնակիցներ՝ առաջին կուրսի ուսանողներ

Սեմինար պարապմունքի նպատակը.

- Ձևավորել բացասական վերաբերմունք վնասակար սովորությունների նկատմամբ:
- Կարևորել առողջության պահպանումը:
- Գնահատել տեղեկացված լինելու կարևորությունը:
- Հավատարիմ մնալ առողջ ապրելակերպի սկզբունքներին:
- Կազմակերպել ուսանողների նպատակային ժամանցը:

Ընթացքը.

Թեման ներկայացնել հետևյալ ենթաթեմաներով.

- ✓ Վնասակար սովորություններ
- ✓ Ծխելու վտանգները
- ✓ Ալկոհոլիզմ
- ✓ Այլ վնասակար սովորություններ

Թեման ներկայացնելուց հետո ուսանողների հետ կատարել քննարկումներ և վերլուծություններ:

Անհրաժեշտ պարագաներ՝ սահիկաշար, էլեկտրոնային նյութեր, էլեկտրոնային գրատախտակ, կրիչ:

Ակնկալվող արդյունք.

Վնասակար սովորությունների նկատմամբ բացասական վերաբերմունք դրսևորող և առողջությունը կարևորող ուսանողներ:

Պատասխանատու՝ Ռ. Կարապետյան

Ն. Սուքիասյան

Լուսաբանում

Կյանքն առանց վնասակար սովորությունների

Սույն թվականի փետրվարի 24-ին, Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանում, «Առողջ ապրելակերպ» դասընթացի շրջանակում առաջին կուրսերի ուսանողների մասնակցությամբ անցկացվեց սեմինար պարապմունք՝ «Կյանքն առանց վնասակար սովորությունների» թեմայով:

Սեմինարի նպատակն էր գնահատել տեղեկացված լինելու կարևորությունը, ձևավորել բացասական վերաբերմունք վնասակար սովորությունների նկատմամբ, կարևորել առողջության պահպանումը:

Ուսումնարանի բուժքույր Ռոզա Կարապետյանը ներկայացրեց վնասակար սովորություններ, ծխելու վտանգները, ալկոհոլիզմ, այլ վնասակար սովորություններ ենթաթեմաները: Ընթացքում ցուցադրվեց թեմային համապատասխան սահիկաշարեր և տեսանյութեր, որոնք առավել տպավորիչ և ազդեցիկ էին, ուսանողների համար լուսակրի դեղին լույսի նման նախազգուշացնող:

Սեմինարի ավարտին հարց-պատասխանների միջոցով մասնակիցները ստացան տարբեր հուզող հարցերի պատասխաններ՝ բավարարելով իրենց հետաքրքրությունները:

Եզրահանգումը միակն էր. հրաժարվել վնասակար սովորություններից՝ հավատարիմ մնալով առողջ ապրելակերպի սկզբունքներին, քանի որ առողջ սերունդն է ձևավորում առողջ հասարակություն:

Սեմինարավար՝ Ռ. Կարապետյան

Նկարադարան

ՀՀ ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐՈՒ
ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ՊՈԱԿ

Ծրագիր

«Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ

«Ավարայր» վավերագրական ֆիլմի ցուցադրման պլան

Կուրս- 1

Առարկա – Հայոց պատմություն

Կազմակերպիչ՝ Ա. Պետրոսյան
Անցկացման ժամանակը՝ փետրվար

Ֆիլմի ցուցադրումը կազմակերպվում է «Սրբոց Վարդանանց տոնի» շրջանակներում

Ֆիլմի ցուցադրման նպատակը.

- Ցուցադրել և ներկայացնել Ավարայրի ճակատամարտի պատճառները ընթացքը և ավարտը
- Արժևորել հայ ժողովրդի մղած պայքարի մեծագույն ձեռքբերումները
- Հավատ ներշնչել սեփական ժողովրդի անկոտրում ոգու և ապագային նկատմամբ

Ուսանողը պետք է գիտենա.

- Վարդանանց պատերազմի պատմական հիմքը
- Եղիշեի մատյանը որպես հավաստի պատմություն
- Ապստամբության պատճառների և ավարտի մասին

Միջոցառման ընթացքը

Դիտել ֆիլմը մասնակիցների միջև կազմակեպել քննարկում

Հումանիտար մեթոդմիավորում

Լուսաբանում

Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանում 2021 թվականի փետրվարի 28-ին տեղի ունեցավ ֆիլմի դիտում՝ «Ավարայր» խորագրով: Ֆիլմի դիտումը կազմակերպվել էր Սրբոց Վարդանանց տոնին նվիրված միջոցառումների շրջանակում: Ֆիլմի ցուցադրման նպատակ էր առաջին կուրսեցիներին ներկայացնել Ավարայրի ճակատամարտի պատճառները, ընթացքը, արժևորել հայ ժողովրդի մղած պայքարի պատմական արժեքը:

Ֆիլմի ցուցադրմանը զուգընթաց՝ ուսանողները անդրադարձան 5-րդ դարի պատմիչ Եղիշեի մատյանին՝ որպես հավաստի պատմական աղբյուրի, խոսեցին ապստամբության ավարտի և հետևանքների մասին: Նշվեց նաև որ Եղիշեի մատյանում Վարդանանց պատերազմը ներկայացնում է որպես կրոնի համար մղված պարերազմ, որին մասնակցել են իշխանից մինչև շինականը, նույնիսկ հայոց աշխարհի փափկասուն տիկնայք:

Հայ առաքելական եկեղեցին Վարդանանց պատերազմի նահատակներին դասել է սրբերի շարքը: Ֆիլմի դիտումից հետո ծավալվեց քննարկում: Ուսանողները արտահայտեցին այն կարծիքը, որ երբ հայրենիքը վտանգի մեջ է, պետք է ոտքի է կանգնեն բոլորը՝ պաշտպանելու հող հայրենին, վկան՝ Վարդանանց պատերազմը:

Պատասխանատու՝ Ա. Պետրոսյան

Ծրագիր

«Գյումրուի թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ

Քննարկված է մ/մ թիվ _____ նիստում
_____ _____ 20 թ.
Մ/մ նախագահ՝ Ա.Մարգարյան

Բաց դասի պլան

Մասնագիտություն՝ «Վարսավիրական արվեստ և գարդային դիմահարդարում՝ վարսահարդար»
Թեմա՝ «Մանկական սանրվածքների առանձնահատկությունները»
Կուրս՝ I
Նպատակ
• Ներկայացնել մանկական սանրվածքների առանձնահատկությունները, տեսակները
• Ձևավորել գեղագիտական ճաշակ և գեղեցիկը գնահատելու կարողություն
• Հարստացնել մասնագիտական գիտելիքներ
• Զարգացնել մասնագիտական հմտություններ
• Զարգացնել ինքնուրույն աշխատելու և հետազոտական աշխատանքներ կատարելու ունակություններ
Նախապատրաստական փուլ
✓ Ուսանողներին հանձնարարել ուսումնասիրել թեման և մշակել անհրաժեշտ տեղեկատվություն՝ «մանկական տոնական և առօրյա սանրվածքներ» /աղջիկների և տղաների համար/
✓ Ստեղծել թեմատիկ բովանդակալից սահիկաշար
Տեսական մաս.
• Նախաբան. «մանկական սանրվածքների առանձնահատկությունները՝ կախված գլխի, դեմքի ձևից և մարդաչափական տվյալներից: Սահիկաշարի միջոցով ստորև նշված թեմաներին երկայացում
• Մանկական սանրվածքների տեսակները՝ տոնական և առօրյա
• «Ոճային նորամուծություններ»
Գործնական մաս.
Մոդելավորված 5/հինգ/ մանկական սանրվածքների ցուցադրում, մեկնաբանում՝ զուգակցվում է նախապես նկարահանված հակիրճ տեսանյութի ներկայացված
Ակնկալվող արդյունք
Մասնագիտական լրացուցիչ գիտելիքներով հարստացած,կարողություններով հմտացած, հետազոտական աշխատանքներ կատարելու ունակություններով և գեղագիտական ճաշակով օժտված ուսանողներ:

Պատասխանատու՝ Լ.Հովհաննիսյան

Նկարադարան

ՀՀ ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐՈՒ
ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ՊՈԱԿ

Ծրագիր

«Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ

Սեղանի թենիսի մրցաշար

Անցկացման ժամկետը՝ _____ փետրվար 2022թ.

Վայրը՝ Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի դահլիճ

Կուրսեր –

Նպատակը .

- խթանել ուսանողների ռազմահայրենասիրական դաստիարակությունը,
- կազմավորել ուսումնարանի հավաքական թիմ,
- խթանել հետաքրքրություն սեղանի թենիսի նկատմամբ,
- զարգացնել վստահություն սեփական ուժերի նկատմամբ,
- կարողանալ տարբեր իրավիճակներում որոշումներ կայացնել, հաղորդակցվել, համագործակցել,
- ունենալ բավարար ֆիզիկական պատրաստվածություն,
- դրսևորել տեխնիկական և տակտիկական գործողությունների ստեղծագործական կիրառում:

Նախապատրաստական աշխատանքներ.

- սեղանի թենիսի պարապմունքների անցկացում,
- մրցույթի մասնակիցների հավաքագրում,
- մրցակարգի մշակում /օլիմպիական մրցակարգ/,
- վիճակահանության անցկացում,
- պատվոգրերի պատրաստում:

Ընթացքը.

- մրցույթի մասնակիցների ներկայացում,
- օլիմպիական կանոնակարգի ներկայացում՝ համաձայն սեղանի թենիսի կանոնակարգի,
- I, II, III մրցանակային տեղերի գնահատում մրցավարի կողմից,
- համապատասխան պատվոգրերի հանձնում:

Անհրաժեշտ մարզագույք

- սեղանի թենիսի գնդաթի,
- սեղանի թենիսի գնդակներ,
- թենիսի սեղան,
- սուլիչ,
- A4 ձևաչափի թուղթ /պատվոգրերի համար/:

Կից ներկայացվում է մրցաշարին մասնակցող թիմերի կազմը:

Ֆիզդեկ՝ Ն. Սուքիասյան

Լուսաբանում

Սեղանի թենիսի մրցաշար

2022 թվականի մարտի 11–ին Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի դահլիճում, անցկացվեց սեղանի թենիսի ներուսումնարանային մրցաշար:
Ըստ վիճակահանության որոշվեց մասնակիցների հանդիպումները:
Մրցաշարն անցկացվեց օլիմպիական սկզբունքով՝ հաղթող զույգը խաղում էր մյուս հաղթող զույգի հետ:

Կիսաեզրափակիչ դուրս եկան հետևյալ մասնակիցները՝ Ասատրյան Ազատ – Միքայելյան Էդիկ, Առաքելյան Վաչագան – Ստեփանյան Մուշեղ:
Եզրափակիչ դուրս եկան հետևյալ մասնակիցները՝ Ասատրյան Ազատ, Ստեփանյան Մուշեղ

Մրցաշարի ավարտին մասնակիցները զբաղեցին հետևյալ մրցանակային տեղերը՝

1-ին տեղ՝ Ասատրյան Ազատ
2-րդ տեղ՝Ստեփանյան Մուշեղ
3-րդ տեղ՝ Առաքելյան Վաչագան

Մրցանակային տեղեր զբաղեցրած մասնակիցները պարգևատրվեցին համապատասխան պատվոգրերով:

Պատասխանատու՝ Ն. Սուքիասյան

Նկարադարան

ՀՀ ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐՈՒ
ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ՊՈԱԿ

Ծրագիր

«Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ

Ձեկույց– ցերեկույթ՝ «Մաթեմատիկան և երաժշտությունը» թեմայով՝ նվիրված մաթեմատիկայի միջազգային օրվան

Ուսուցիչ՝ Ռ. Պետրոսյան
Կուրս ----------
Անցկացման մարտ 2022թ.

Երաժշտությունը թվաբանության մեջ հոգու գիտակից վարժությունն է:

Լեյբնիզ

Նպատակը.

- Կարևորել մաթեմատիկայի դերը աշխարհընկալման գործընթացում:
- Ներկայացնել մաթեմատիկայի և արվեստի միջև եղած կապը:
- Արժևորել մաթեմատիկայի դերը տրամաբանական մտածողության, վերլուծելու և եզրակացնելու կարողությունների, վերացական և կոնցեպտուալ մտածողության ձևավորման մեջ:

Ընթացքը.

I մաս

Տեսանյութի դիտում:

II մաս

Ձեկույցի ներկայացում /զուգահեռ սահիկաշար և տեսանյութեր/:

Ակնկալվող արդյունք.

Մարդկային կյանքում մաթեմատիկայի դերն ու նշանակությունը գնահատող ուսանողներ:

Պատասխանատու՝ Ռ. Պետրոսյան

Լուսաբանում

Մարտի 14-ին Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանում, մաթեմատիկայի դասախոս Ռ.Պետրոսյանը անցկացրեց «Մաթեմատիկան և երաժշտությունը» թեմայով զեկույց՝ նվիրված Մաթեմատիկայի միջազգային օրվան: Զեկույցի նպատակն էր կարևորել մաթեմատիկայի դերը աշխարհընկալման գործընթացում, ձևավորել տրամաբանական, վերացական և կոնցեպտուալ մտածողություն:

Տրվեց Մաթեմատիկայի միջազգային օրվա ընտրության հիմնավորումը, որը կապ ունի π թվի մոտարկված թվաբանական արժեքի հետ:

Զեկույցի նախաբանում ներկայացվեց մաթեմատիկայի կապը այլ գիտությունների և արվեստի հետ, որը զարգացած ու կրթված անհատի երաշխիքն է: Նշվեց, որ բացի առօրյա հաշվարկներից մաթեմատիկան մարդու մոտ զարգացնում է վերլուծական մտածելակերպ:

Զեկույցի ընթացքում ցուցադրվում էր թեմային համապատասխան սահիկաշար և տեսանյութեր:

Զեկույցն ավարտվեց երաժիշտ Դեյվիդ Մակ Դոնալդի π թվի՝ ստորակետից հետո եկող առաջին 122 նիշերից կազմված դաշնամուրային մեղեդիով:

Կազմակերպիչ՝ Ռ. Պետրոսյան

Ծրագիր

«Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ

Բաց դասի պլան՝

Մասնագիտություն՝ «Ոսկերչություն՝ ոսկերիչ»
Կուրս՝ I
Թեմա՝ «Հնամենի զարդերի վերածնունդը»

Նպատակ

Ծանոթանալ՝

- հին Հայաստանում զարդարվեստի պատմությանը և մշակութային կյանքին,
- արծաթագործության գաղտնիքներին՝ դիտարկելով «ճարտարապետությունը փոքր մասշտաբների մեջ»,

Ճանաչել՝

- ժամանակակից հայ ոսկերիչներին, նրանց հայտնի ձեռակերտ աշխատանքներին,

Ներկայացնել ուսանողների ինքնուրույն կատարած ոսկերչական աշխատանքները՝ կարևորելով ընտրած մասնագիտությունը:

Արժևորել արվեստի կրթա-դաստիարակչական կողմերը

Նախապատրաստական աշխատանքներ

Թեմայի վերաբերյալ տեղեկատվական նյութերի/տեսանյութերի ձեռքբերում

Ընթացքը

Ներկայացնել

- հին Հայաստանում մշակութային կյանքի պատմությունը /տեղեկատվության համառոտ ներկայացում՝ տեսանյութերի զուգակցմամբ
- ժամանակակից հայ ոսկերիչների մասին տեղեկատվություն,
- Ուսանողների ձեռագործ զարդերի ցուցադրում, մասնագիտական երկխոսություն

Արդյունք

- Մեփական ժողովրդի հարուստ մշակութային ժառանգության վերաբերյալ պատկերացում ունեցող պատանիներ
- Հայ տաղանդավոր վարպետների գործը շարունակող սերունդ
- Թեմայի շուրջ գիտելիքները խորացրած և հարստացրած, վերլուծական միտքը զարգացրած սովորողներ
- Ազգային մշակույթը գնահատող և պահպանող ուսանողներ

Դասավանդողներ՝ Ա. Բաղդասարյան

Լուսաբանում

«Հնամենի զարդերի վերածնունդը» թեմայով բաց դասը

2022թ.-ի մարտի 28-ին ՀՀ ԿԳՄՍՆ «Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ - ում անցկացվեց «Հնամենի զարդերի վերածնունդը» թեմայով բաց դասը: Բաց դասի նպատակն էր ծանոթանալ Հայաստանի զարդարվեստի պատմությանը և մշակութային կյանքին, ժամանակակից հայ ոսկերիչներին և նրանց ձեռակերտ աշխատանքներին, ցուցադրել ոսկերիչ ուսանողների ձեռքի աշխատանքները, ինչպես նաև արժևորել արվեստի կրթադաստիարակչական կողմերը:

Միջոցառման նախաբանը՝ հայկական կոլորիտը իր նրբագեղությամբ ներկայացնող տեսանյութի ցուցադրումն էր, որտեղ բարդ զարդանախշերով ձեռակերտ զարդերն իրենց տարազների վրա կրող կանայք հանդես էին գալիս զարդը բնութագրող կերպարով:

Այնուհետև, սահուն կերպով, անցում կատարվեց հաջորդ տեսանյութերի ցուցադրմանը, որտեղ մանրակրկիտ ներկայացված էին Արման Դավթյանի՝ ոսկերիչ-ոճաբան Նուռի հանրաճանաչ ոսկերչական իրերի և զարդերի նմուշները: Բավականին տպավորիչ էին արվեստագետ - արծաթագործ Գոռ Հովհաննիսյանի ստեղծած զարդերի ներկայացումը, ում խոսքերով. «Ոսկերչությունն ու արծաթագործությունը ճարտարապետություն են փոքր մաշտաբների մեջ»: Գեղեցիկ էր նաև ավանգարդ ոճի ստեղծագործող Արտյոմ Սարգսյանի աշխատանքների ներկայացումը, ում դիպուկ արտահայտմամբ էլ. «Արվեստը դա մարդ արարածն է՝ բնության առեղծվածը»:

Բաց դասը եզրափակվեց տվորողների կողմից ոսկերիչի պարտականությունները, գործառույթները, աշխատավայրը, ոսկերչություն մասնագիտության կարևոր որակները ներկայացնելով, իրենց կողմից ստեղծված ոսկերչական իրերը, զարդերը ցուցադրելով և վերջիններիս տեխնիկական բնութագրերը արհեստավարժորեն ու գրագետ մեկնաբանելով:

Միջոցառման ընթացքում ուսանողներին հաջողվեց ներկաներին կտրել առօրյայից և տեղափոխել «արհեստի և արվեստի զարմանահրաշ աշխարհ»:

Դասավանդող՝ Ա. Բաղդասարյան